

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**  
**Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ**  
**ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ**  
**ՆԻՍՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**Հարգարժան Տեր Հայր**

**Հարգելի՛ վետերաններ, ազատամարտիկներ, հյուրեր**

Շնորհավորում եմ բոլորիս Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ:

Այսօր լրանում է Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյա հոբելյանը: Այս օրերին նախկին խորհրդային միության կազմում գտնվող հանրապետությունները մեծ հանդիսավորությամբ նշում են ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի 70-րդ տարեդարձը:

Այս հաղթանակը բոլոր ժամանակներում համարվել և համարվում է պատմական կարևոր իրադարձություն: Հաղթանակ, որը կերտել են նաև հայ ժողովրդի հերոս զավակները:

Մեծ հաղթանակը ձեռք բերվեց նաև հայ ժողովրդի արժանավոր զավակների, բազմահազար շարքային մարտիկների ու նշանավոր հրամանատարների շնորհիվ:

Հայրենական Մեծ պատերազմում իրենց նշանակալի մասնակցությունն են ունեցել նաև ներկայիս Կոտայքի մարզի Հրազդանի, Աբովյանի ու Նաիրիի տարածաշրջանների գրեթե բոլոր համայնքները ներկայացնող ավելի քան տասը հազար զինվորականներ՝ իրենց անունները ոսկե տառերով գրելով Մեծ Հաղթանակի հուշամատյանում:

Կոտայքի մարզում մենք այս տոնը նշում ենք մեծ ոգևորությամբ, հատկապես, որ այս դահլիճում մեր կողքին են նաև Հայրենական մեծ պատերազմի՝ հարգարժան վետերանները:

Փառք ու պատիվ Ձեզ սիրելի՛ վետերաններ:

## **Սիրելի՛ ներկաներ**

Այսօր նաև Շուշիի ազատագրման օրն է...

Շուշիի ազատագրումը պատմական անհրաժեշտություն էր, որով և սկիզբ առավ հայ ժողովրդի պատմության նոր հաղթանակների շարքը:

Փառք ու պատիվ նաև Շուշիի ազատագրմանը և ընդհանրապես Արցախյան ազատամարտի մասնակից մեր բոլոր տղաներին, Կոտայքի մարզի տարբեր համայնքներից զինվորագրված բոլոր ազատամարտիկներին:

## **Հանդիսավոր նիստի հարգարժան մասնակիցներ**

Մենք հաղթող ու հաղթանակած ազգ ենք, և այդպես էլ պետք է շարունակենք, պետք է ունենանք նոր հաղթանակներ:

Եվ այստեղ տեղին եմ համարում մեջբերել Հայաստանի Հանրապետության Նախագահ պարոն Սարգսյանի հետևյալ խոսքը.

*<<Մեր ժողովուրդը շար թանկ գին է վճարել իր ազատության և անկախ պետականության համար: Մենք իբրև ազգ և պետություն շարունակում ենք մեր հազարամյա երթը՝ ոչ մի բռնի չմոռանալով այդ մասին>>:*

## **Հանդիսավոր նիստի հարգարժան մասնակիցներ**

Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ կրկին ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ:

Մեր ջերմ մաղթանքներ ենք հղում բոլոր վետերաններին, Արցախյան ազատամարտի բոլոր մասնակիցներին: Հավերժ փառք իրենց կյանքը հայրենիքի զոհասեղանին մատուցած բոլոր նվիրյալներին:

Եվ բարի ու խաղաղ ծառայություն նաև այն հերոս հայորդիներին, ովքեր այս պահին ամուր և անխախտ են պահում մեր հայրենիքի սահմանները:

Ամենայն բարիք և նորանոր հաջողություններ բոլորիդ:

**09.05.2015**

